

Ճշգրտեալ Ճշմարտել որչափի ինչ ածե.  
զէնն բանք առաւելութեամբ իմն ըզ  
մարդկայնոցո ցուցանեն զյեղյեղուկն  
անհաստատութիւն : . . .

“ Ահաւասիկ տիկինն այն մեծասիրտ,  
ահա սքանչելին այն և փարելի . ահա.  
ւանիկ գործն մահու . ահա նշխալքն  
այն որ փոքր մի ևս և յաշաց մերոց ծած  
կեսցին . ստուերն այն փառաց ’ի չիք  
դառնայ , և տեսցուք մեք զնա զի և ’ի  
տիսրագին զարդուց աստի մերկ կողո.  
պուտ , իջցէ ’ի վայրսն այն խուարի , ’ի  
տուն անդր որ ընդ երկրաւն է , զի ըստ  
Հոքայ բարբառելոյ , ’ի հող անդր նըն.  
ջեսցէ , ընդ մեծամեծս երկրի , ընդ թա.  
գաւորս և ընդ իշխանս ընդ այնոսիկ որ  
ոչ ևս են , յորոց միջի հազիւ ուրեմն  
գուցէ նմա զտեզի գտանել մինչ անձկա.  
ցեալ վայրացն , և մահ կազմ և ’ի պատ.  
րաստի կայ և ևս նուլ զնոսա : Այլ գեռ  
ևս ’ի պատիրս խաթէութեան ունի ըզ  
մեզ աստեն երեակերպութիւն . չիք  
մահու թողուլ մեզ զետեղակալ ինչ  
մարմին , և ոչ այլ ինչ տեսանեմք անդա.  
նօր՝ բայց զտապանս՝ որ ձե իմն պատ.  
կերի առաջի աչաց մերոց ընծայեն :  
Վարմինս մեր փոխեսցի բնութեամբ ,  
փոխեսցի և յանուանեն նաև գիտին ան.  
գամ . ոչ յերկարատե ինչ մնայցէ նմա ,  
ասէ Տերտուղիանոս , գիտին՝ որ գեռ  
ևս զմարդկային ինչ յանձին իւրում  
ցուցանէ մեզ կերպարան , և ահա այ.  
նուհետե յեղու գառնայ յայն ինչ զոր  
լեզու մարդկեղէն չգիտէ կոչել . այն  
քան Ճշմարտեալ եթէ ամենայն ինչ  
զրաւեալ մեռանի ’ի նմա , մինչեւ չմնալ  
նմա և ոչ այն իսկ որով թշուաւական  
նշխարք մնացուածոց նորա նշանակեալ  
լինիցին . . .”


ՊՈՍԻՒԵ

Սարս մարագախտը և իր մահարձանը :

Տրեզտաքաղաքին մէջ ծնաւ Վաւ.  
րիտիոս ( Վորիս ) Վաքս մարաջախտը  
1696ին , և իրեն ծնողքն էին Վէգոս.  
տոս Բ Եհաց թագաւորն ու Վաքսո.  
նիոյ կայսրանտիրը , և Գէնիկսմարքի  
կուսուհին : Վաւրիտիոս՝ տղայ հասա.  
կէն զինուորական հրահանգաց մէջ  
վարժելով, նշանաւոր եղաւ լիլ ( 1708 )  
և իջուռնէ ( 1709 ) քաղաքաց պաշար.  
ման ատեն , և Վալֆլաքէի պատերազ.  
մին ահաւոր և անլուր կոտորածին մէջ՝  
անանկ անխոռով ցրտութիւն մը ցըցուց՝  
որ միայն բազմաժամանակեայ փորձա.  
ռութեան արդասիք կրնար սեպուիլ :  
Այլ զարմանար Ը ուետաց Կարոլոս ԺԲ  
թագաւորին վրայ , և երբոր Վթրալ.  
սունտի պատերազմին մէջ ականատես  
եղաւ անոր կարգէ գուրս քաջութեա.  
նը , այնպիսի սէր և մեծարանք մը ու.  
նեցաւ վրան՝ որ իր զինուորական կեան.  
քը անոր նմանցընել ուզեց :

Վաւրիտիոս իր քաջութիւններովը  
սիրտ առած՝ Վաճառստան զնաց , Վւ.  
գիննէս իշխանին զրօշուն տակ զինուո.  
րելու . և այն ատենէն սկսաւ գաղղիա.  
կան ազգին հակամիտութիւն մը ունե.  
նալ . ուստի երբոր քիչ ժամանակէն ետ.  
քը Շարիզ եկաւ , Վաղղիացւոցմէ մեծ  
ընդունելութիւն գտաւ : Այն ատենէն  
սկսաւ Վաւրիտիոս մասնաւոր ջանքով  
մը զինուորական արուեստի հմտութե.  
ետեւէ ըլլալ , և պատերազմաց հրա.  
հանգքը նորանոր գիւտերով զարդարել  
և Ճոխացընել :

Եհաց Վէգոստոս թագաւորին ու  
Վինա Խւանովնա մեծին Պետրոսի զըս.  
տերը պաշտպանութեամբը՝ Վուրլան.  
տիոյ դուքս անուանեցաւ Վաւրիտիոս .  
բայց ետքը իր այս նոր իշխանութեան  
իրաւունքները պաշտպանելու համար  
ստիպուեցաւ Պառսաց և Եհաց հետ  
ալ կառւիլ . ու չկրնալով անոնց դէմ  
զնել , ստիպուեցաւ Վաղղիա անցնիլ ,  
և այն ազգին՝ որուն ձեռքով իր մեծու.  
թիւնը ստացեր եր , օգնութեանը ա-



### Սաքս մարածախտին մահարձանը.

պատինիլ։ Բայց որովհետեւ Գաղղիա  
այն ատենները խաղաղ անդորրութեան  
մէջ էր, ուստի և իր եռանգուն գործու-  
նէութեանը և պատերազմասէր ըղձից  
Ճարակ կը պակսէր։ Իտեն անցնելէն  
ետքը՝ երբոր Գաղղիա ստիպուեցաւ  
Լուտրիոյ դէմ պատերազմ հրատարա-  
կել, Աւարիտիոս մէկէն Ա երսայլ վա-  
զեց, թագաւորէն խնդրելու համար որ

զինքն ալ պատերազմի խրկէ։ Արտին և  
եռանգեանը արժանի քաջագործութքը  
նշանաւոր եղաւ Փիլիսապուրկի պաշար-  
ման ատեն, և անկէ վերջը եղած պա-  
տերազմաց մէջ։ ու 1736<sup>ին</sup> սահմա-  
նուած խաղաղութենէն ետքը ընդհա-  
նուր տեղակալ անուանեցաւ։

Լոյս խաղաղութիւնը երկար ատեն  
չտեւեց։ Կարուլոս Զ կայսէր մահուամ-

ըլ ամէն բան տակնուվրայ ըլլալով՝  
| ու գովիկոս ԺԵ բանակ մը խրկեց 'ի  
Պոհեմիա, որուն ձախ թեխն հրամա-  
նատարութիւնը կ'ընէր Ա'աւրիտիոս :  
Վիչ օրուան մէջ յարձակմամբ տիրեց  
Իշրակա մայրաքաղքին, և քաջութեա-  
նը ժամանակ մարդասիրութիւն գոր-  
ծածելով՝ ամէն խնամքը բանեցուց որ  
ըլլայ թէ զօրքը աւարառութեամբ  
յաղթութե փառքը մթընցընէ : Այն-  
պիսի արագութեամբ տիրեց նաև | Ն-  
կրա բերդաքաղաքին, և իրեն ճարտա-  
րութեան և քաջութեան նշանակները  
ցըցուց թէ Պաւիերայի բանակին հրա-  
մանատարութեանը ատեն, և թէ Ա-  
սացիայի պաշտպանութեանը ժամա-  
նակ, | որենայի Լարոլոս իշխանին դէմ:  
Ի յս ամէն քաջագործութեանցը հա-  
մար՝ Պաղպիոյ մարածախտութեան գա-  
ւազանը ընդունեցաւ (1743) :

Հետեւեալ երկու տարուան մէջ տը-  
րուած պատերազմաց ժամանակն ալ ա-  
ւելի փառաւորուելով, երբոր հասակն  
սկսաւ առնուլ և ուժէ իրեն, տէրու-  
թիւնը Կ ամպորի դքսութեան մէջ այլ  
և այլ կալուածներ տուաւ իրեն, և տա-  
րուէ տարի քառասուն հազար ֆրանք :  
Այն իսաղաղ առանձնութեան մէջ լը-  
մինցուց Ա'աւրիտիոս իր կեանքը (30  
նոյեմբեր, 1750) . և մեռնելուն ատեն  
կ'ըսէր թէ “ Լեանքը երազ մըն է . իմն  
գեղեցիկ՝ բայց կարծատե երազ մը ե-  
զաւ ” :

Ա'աւրիտիոս լուտերական աղանդի  
վերաբերելուն համար Ա'էն-Ծընիի մէջ  
չկրցաւ թաղուիլ, այլ սրբոյն իժովմայի  
եկեղեցւոյն մէջ ամփոփուեցաւ իր մար-  
մինը, և ժամանակին անուանի ճար-  
տար անդրիագործը Փիկալ՝ մեր դրած  
պատկերին մէջ երեցած մահարձանը  
կանգնեց անոր պատուոյն :

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Անքրդիլ Տիրերունի Հեղիաստանի մէջ ըրած  
ձամբորդուրիւնները՝ Զրադաշտայ գրքերը  
գտնալու համար :

Ա'նքրդիլ Տիրերոն հազիւ քսանու-  
երկու տարեկան կար երբոր Ի արիզի  
մէջ առջի անգամ չորս թուղթ ( ) էնտի  
գրուածք մը ( | անտիտա- || ատիէն գա-  
ղափարեց, որն որ ( ) էնտաւեստայի գը-  
րուածոց մասերէն մէկն է : Ա'նքրդիլ այն-  
պէս վառուեցաւ՝ որ մէկէն միտքը դրաւ  
ետեւէ ըլլալու ու թարգմանելու Պար-  
սից ամբողջ աս օրինաց գիրքը, և որ-  
պէս զի լաւ սորմի Պարսից հին լեզուն  
հաստատեց որ այն կողմերը երթայ :  
Ա'նքրդիլ իր ժամանակի գիտնոց շատին  
իր աս միտքը յայտնեց, ինչպէս Այլիէի  
որ թագաւորին գրատան վերակեցուն  
էր, Պարթէլըմիին և Աէլլիւս կոմսին,  
որոնք սիրտ տուին և խոստացան ուսմանց  
պաշտօնեային հետ խօսելու 'ի նպաստ  
իրեն, և Հնդկաց ընկերութենէն խըն-  
դրելու որ իրեն ձեռնտու ըլլան : Ի այց  
Ա'նքրդիլ անանկ վառուած էր, որ ատ  
կերպով իր ուղեւորութեան ուշանալուն  
կասկածը զինքը անհամբեր կ'ընէր .  
բայց միանգամայն աղքատ ըլլալով՝ կար-  
գէ դուրս միջոցի մը ձեռք զարկաւ, այս-  
ինքն առանց իրեն ազգականացը իմա-  
ցընելու՝ Հնդկային ընկերութեան զի-  
նուոր գրուեցաւ : Իր երթալը աս կեր-  
պով որոշելէն ետքը, մէկէն ճամբու  
պատրաստութիւն տեսաւ . ունեցածը՝  
բոլոր բոլոր էր երկու շապիկ, երկու  
թաշկինակ, զյգ մը գուրապայ, ստուծ  
մը ու եբրայական աստուածաշունչ մը .  
ընաւ մէկու մը մնաք բարովի չգնաց,  
և միայն իր եղբօրը սրտաշարժ հրաժա-  
րականը տալով, 7 նոյեմբերի 1754ին,  
ճամբայ ելաւ ոտքով՝ առտուն կանուխ  
քանի մը ընկերակիցներով, ստորին ըս-  
պայ մը իրենց առաջնորդ ունենալով :

Ի արիզէն դէպ 'ի լ օրիան ըրած ու-  
ղեւորութիւնը վարժութիւն մ' եղաւ  
իրեն ծանր աշխատութեանց, զոր ա-